

III

ՏՆՕՐՀՆԷՔ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

HOME BLESSING
TRANSFIGURATION



III

ՏՆՕՐՀՆԷՔ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

HOME BLESSING TRANSFIGURATION

Ընտանիքի անդամը կամ սարկաւազը.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեցուք: Ընկալ, կեցո եւ ողորմեա:

Քահանայն.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Family member or deacon: Again in peace let us pray to the Lord: Receive our prayers, save us and have mercy on us.

Priest: Blessing and glory to the Father and to the Son and to the Holy Spirit, now and always and unto the ages of ages. Amen.



ԿԱՆՈՆ ՎԱՐԴԱՎԱՌԻ
ՈՐ Ի ԼԵՐԻՆՆ

GANON VARTAVAREE
VOR EE LEREENN

Որ ի լե - թինն այ - լա - կեր - պեալ
Vor ee le - reenn ay - la - ger - byal
Being transfigured on the mountain, You showed your divine power; We glorify You,

ցու - - - ցեր զԱստ - ուա - ծա - յին
tsoo - - - tser zAsd - va - dza - yeen
O intelligible Light!

քո - զօ - լու - թինդ. զքեզ ի - սա - նա - - -
ko - zo - roo - tyoont: zkez pa - ra - - -

տ - թե՛ք ի - մա - նա - յի - - - լոյս: - - -
vo - remk ee - ma - na - lee - - - looys. - - -



Տօն Այլակերպութեան Տեան Մերոյ Յիսուսի Քրիստոսի Տնօրհնէք Վարդավառի

Մարկոսացի
Deacon

Ա - լէ - լու - խա, Օր - - թի:
A - le - loo - ya, Or - - tee.

Քահանայի
Priest

Խա - դա - դու - թիսն ա - մե - նե - ցուն:
Kha - gha - goo - tyoon a - me - ne - tsoon.

Դպիրքն
Family

Եւ ընդ հոգ - տյոյ քուն:
Yev unt hok - vooyt koom.

Մարկոսացի
Deacon

Եր - կի - դա - ծու - քեանք Ը - ուա - քոս:
Yer - gyoo - gha - dzoo - tyamp lu - va - - rook.

Քահանայի
Priest

Սըր - քոյ Ա - տե - սա - քա - նիս Յի - սու - սի
Sur - po A - ve - da - ra - nees Hee - soo - see

Քրիս - տո - սի որ լստ Մատ - քե - ո - սի:
Krees - do - see vor usd Mad - te - o - see.

Դպիրքն
Family

Փարք քեզ Տըր Աստ - ուած _____ մեր:
Park kez Der Asd - vadz _____ mer.

Մարկոսացի
Deacon

Պնու - - - խո - - - մէ:
Bros - - - khoo - - - meh.

Դպիրքն
Family

Ա - սէ Աստ - ուած: _____
A - seh Asd - vadz. _____

Մատթեոս ԺԷ: 1-13

Վասն Այլակերպութեան Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ յետ վեց ամօր առնու Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղբայր լորա, եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. եւ այլակերպեցաւ առաջի լոցա, եւ լուսաւորեցան երեսք լորա իբրեւ զարեգակն, եւ հաւնէրձք լորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս: Եւ ահա երեւեցան լոցա Մովսէս եւ Եղիա՝ որ խօսէին ընդ նմա: Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ զՅիսուս. Տէր, բարոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝ արասցոք երիս տաղաւարս. մի քեզ, եւ մի Մովսէսի, եւ մի Եղիայի: Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ լոցա. ձայն եղև յամպոյն եւ ասէ. Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարոք: Իբրեւ լուսն աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իրեանց եւ երկեան յոյժ: Եւ մատուցեալ Յիսուս բուննեհար զնոցանէ եւ ասէ. Յոսն կացէք եւ մի՛ երկնչէք: Ամբարձին զաչս իրեանց, եւ ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս: Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց լոցա Յիսուս եւ ասէ. Մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ:

Աշխարհաբար

Եւ վեց օր յետոյ Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոսն ու անոր եղբայրը՝ Յովհաննէսը, եւ զանոնք հանեց բարձր լեռ մը՝ առանձինն. եւ անոնց առջեւ կերպարանափոխուեցաւ. եւ անոր երեսք փայլեցաւ ինչպէս արեգակը, եւ անոր զգեստները դարձան սպիտակ ինչպէս լոյսը: Եւ ահա անոնց երեւցան Մովսէս ու Եղիա, որ կը խօսէին անոր հետ: Պետրոս խօսեցաւ եւ ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, լաւ է, որ մենք այստեղ ենք, եթէ կ'ուզես, երեսք տաղաւարներ շինենք, մէկը՝ քեզի համար, մէկը Մովսէսի, մէկն ա՛լ Եղիայի»: Եւ մինչ ան տակաւին կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ. ամպէն ձայն մը եկաւ եւ ըսաւ. «Ասիկա՛ է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ. ատո՛ր մտիկ ըրեք»: Երբ աշակերտները այս լսեցին՝ երեսնիվայր ինկան եւ սաստիկ վախցան: Եւ Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց ու ըսաւ. «Ոտքի՛ ելէք եւ մի՛ վախճաք»: Անոնք աչքերին բարձրացուցին եւ Յիսուսէ զատ ոչ ոք տեսան: Եւ մինչ լեռնէն կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց եւ ըսաւ. «Այդ տեսիլքը մարդու չպատմէք, մինչեւ որ մարդու Որդին մեռելներէն յարութիւն առնէ»:

Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ

Matthew: 17: 1-13

And after six days Jesus took with him Peter and James and John his brother, and led them up a high mountain apart. And he was transfigured before them, and his face shone like the sun, and his garments became white as light. And behold, there appeared to them Moses and Elijah, talking with him. And Peter said to Jesus, "Lord, it is well that we are here; if you wish, I will make three booths here, one for you and one for Moses and one for Elijah." He was still speaking, when lo, a bright cloud overshadowed them, and a voice from the cloud said, "This is my beloved Son, with whom I am well pleased; listen to him." When the disciples heard this, they fell on their faces, and were filled with awe. But Jesus came and touched them, saying, "Rise, and have no fear." And when they lifted up their eyes, they saw no one but Jesus only.

And as they were coming down the mountain, Jesus commanded them, "Tell no one the vision, until the Son of man is raised from the dead."

Կրկնել երիցս

Ընտանիքը. *Ամէն Ալէլուիա Ալէլուիա Ալէլուիա*

Քահանայն. *Օրհնեցի եւ սրբեցի ջուրս, հացս եւ աղս այս նշանաւ Ա. Խաչիս եւ Սուրբ Աւետարանաւս եւ աւուրս շնորհիս, անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից:*

Priest:

May this water, bread and the salt be blessed by the sign of the Holy Cross and by the Holy Gospel and by the Grace of this day, in the name of the Father and of the Son and of the Holy Spirit, now and always forever and ever Amen.

Սարկաւագն. Սուրբ խաչիս աղաչեցոք զՏէր, զի սովաւ փրկեացէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհի ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

The Deacon: By the holy cross let us beseech the Lord, that through it he may deliver us from our sins and save us by the grace of his mercy. Almighty Lord our God, save us and have mercy on us.

Քահանայն. Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, պահեա եւ պահպանեա զտունս զայս եւ զբնակիչս սորա _____ (անուն ընտանիքի), ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիոյ քով ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամույն. արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

The Priest: O Protector and hope of the faithful, Christ our God, guard and bless this house and all that dwell therein _____ (family name); and keep them in peace under the shadow of your holy and venerable Cross. Deliver them from the visible and invisible enemy. Make them worthy to give you thanks and to glorify you together with the Father and the Holy Spirit, now and always and unto the ages of ages. Amen.

Քահանայն. *Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:*

Միասնաբար. Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեացէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորոյ սուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաիտեանս. ամէն:

Priest: Blessed be our Lord Jesus Christ. Amen.

Together: Our Father, who art in heaven, hallowed be thy name; thy kingdom come; thy will be done on earth as it is in heaven. Give us this day our daily bread; and forgive us our debts, as we forgive our debtors; and lead us not into temptation; but deliver us from evil. For thine is the kingdom and the power and the glory unto the ages, Amen.

